

Գրավատների գործարար շրջանառության սովորույթ

Համաձայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի (հոդված 14, 3-րդ կետ)՝ Հաշտարարը որոշում կայացնելիս հաշվի է առնում ոչ միայն ՀՀ օրենսդրության պահանջները, այլև գործարար վարքագծի և էթիկայի կանոնները, գործարար շրջանառության սովորույթները: Գրավատների միության խնդրանքով, ինչպես նաև Ֆինանսական համակարգի հաշտարարի սահուն գործունեությունն ապահովելու, և անհրաժեշտության դեպքում գործարար շրջանառության սովորույթը կիրառելու նպատակով սույն թվականի հունիսի 16-ին Հաշտարարի գրասենյակը գրություն է ուղարկել ՀՀ-ում գործող բոլոր բանկերին և խնդրել նրանց կարծիքը ներքոհիշյալ հարցերի վերաբերյալ:

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի հոդված 249-ի 2-րդ մասով սահմանվում է, որ բռնագանձման ծանուցումը պարտապանին հանձնելուց երկու ամիս հետո գրավատուն իրավունք ունի գրավատուի անունից իրացնել գրավի առարկան ուղղակի վաճառքի կամ հրապարակային սակարկությունների միջոցով, եթե գրավատուն և գրավատուն գրավի առարկայի իրացման այլ կարգ չեն նախատեսել: Գրասենյակը ցանկանում էր տեղեկանալ՝ լուրբարդային վարկերի դեպքում գրավի առարկան բանկն իրացնում է հիմնականում ուղղակի վաճառքի, թե՞ հրապարակային սակարկությունների միջոցով: Եթե գրավի առարկան իրացվում է ուղղակի վաճառքի միջոցով, ապա դա իրականացնելու համար ի՞նչ կարգ է գործում բանկում: Բացի այդ որոշ գրավատների կողմից կարծիք էր ներկայացվել, որ վերոնշյալ հոդվածով նախատեսված երկամսյա ժամկետը չի տարածվում այս տիպի գրավների վրա, և որ լուրբարդային վարկերի դեպքում գրավատունը պետք է գույքն իրացնի՝ առանց պահպանելու վերը նշված կանոնը: Գրավատները պնդում են, որ գործող սովորույթի համաձայն՝ գրավատները գրավի առարկան իրացնելիս ղեկավարվում են ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 255-րդ հոդվածի 7-րդ կետով սահմանված կանոնով: Պետք է նշել, որ Հաշտարարի գրասենյակ գրավատների դեմ ներկայացված բողոքները մեծամասամբ կապված էին այդ խնդրի հետ: Գործարար շրջանառության սովորույթը բացահայտելու նպատակով՝ Գրասենյակը խնդրել է Բանկերին հնարավորության դեպքում կարծիք ներկայացնել այս հարցի վերաբերյալ, ինչպես նաև նկարագրել Բանկերում գործող ներքին կարգը:

Հարցի կապակցությամբ բոլոր բանկերի կողմից տրված բացատրություններն ու պարզաբանումները, ինչպես նաև բարձր որակավորում ունեցող իրավաբանների հետ քննարկումները հանգել են հետևյալին.

ա) ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի հոդված 249-ով սահմանված գրավի առարկայի իրացման ընդհանուր կարգից բացի գրավատների կողմից գրավի առարկայի իրացման վերաբերյալ օրենսգրքի 255 հոդվածի 7-րդ մասով սահմանված է հատուկ դրույթ, որի համաձայն՝ գրավով ապահովված վարկի գումարը սահմանված ժամկետում չվերադարձնելու դեպքում գրավատունն իրավունք ունի այդ գույքն իրացնել հրապարակային սակարկություններով: Այս դրույթից բխում է, որ գրավատուի և գրավատան միջև կնքվող պայմանագրով կարող է նախատեսվել գրավի առարկայի իրացման միայն մեկ՝ հրապարակային սակարկությունների միջոցով իրացման եղանակ, քանի որ այս նորմը իմպերատիվ է և կողմերի համաձայնությամբ ենթակա չէ փոփոխության:

բ) Միննույն ժամանակ, օրենսգրքի վերոնշյալ 255 հոդվածը գրավի առարկայի իրացման հատուկ ժամկետներ և կարգ չի նախատեսել, ինչի հետևանքով ժամկետների մասով շարունակում է կիրառելի մնալ օրենսգրքի 249 հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերությամբ սահմանված ընդհանուր դրույթը, այն է՝ բնագանձման ծանուցումը պարտապանին հանձնելուց երկու ամիս հետո գրավառուն սույն օրենսգրքի ուժով իրավունք ունի նույն օրենսգրքի 195 հոդվածի պահպանմամբ գրավատուի անունից իրացնելու գրավի առարկան ուղղակի վաճառքի կամ հրապարակային սակարկությունների միջոցով, եթե գրավատուն և գրավառուն գրավի առարկայի իրացման այլ կարգ չեն նախատեսել: Վերջին պարբերությունը կրում է դիսպոզիտիվ բնույթ, այսինքն՝ գրավատուն և գրավառուն միմյանց միջև կնքած պայմանագրով կարող են նախատեսել գրավատուին ծանուցելուց հետո գրավի առարկայի իրացման այլ՝ երկու ամսից տարբերվող ժամկետ, ինչը չի հակասի քաղաքացիական օրենսդրությանը:

Գործարար շրջանառության սովորույթը ներկայացնելով՝ հուսով ենք, որ Բանկերի կողմից ներկայացրած գործարար սովորույթի հիման վրա կատարած մեր պարզաբանումները կնպաստեն գրավատների գործունեության օրինականության և արդյունավետության ապահովմանը, ինչպես նաև զերծ կպահեն նրանց կողմից սպառողների իրավունքների խախտման դեպքերից: